ԽՈՐԱՅՐԵՔ ՁԵՐ ԳՀԻՏԵԼԻՔՆԵՐԸ

Մարդու գլխուղեղի ստորին մասում առկա հիպոֆիզ կոչված գեղձը որոշում է նրա հասակը: Հիպոֆիզն արտադրում է աճի հորմոններ: Եթե մանկական տարիքում հորմոնների արտադրությունը նորմայից շատ է, մարդու հասակը կարող է գերազանցել երկու մետրը: Հորմոնի արտադրության անբավարար քանակի դեպքում մարդու աճը դադարում է, հասնելով մոտ 120 սմ-ի: Եթե աճի հորմոնի ավելցուկ է առաջանում մարդու չափահաս տարիքում, երբ հասակի աճն արդեն դադարել է, ապա սկսում են անհամաչափ մեծանալ մարմնի ցցուն մասերը՝ քիթը, լեզուն, ձեռքի թաթերն ու ոտնաթաթերը: